

**G-6 տիպի բնական գազի կենցաղային հաշվիչի տեղադրման հանգույցի
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՏԿՈՐՈՇՈՒՄ**

- 1. Նշանակությունը** 1.1 Բնական գազի կենցաղային հաշվիչի արկղը և միացնող հանգույցը (այսուհետ՝ Տեղադրման հանգույց) նախատեսված է հաշվիչով համալրված չափիչ սարքերի համար մթնոլորտային տեղումներից, արտաքին միջամտություններից պաշտպանելու, գազի լրացուցիչ մաքրման և գազի հոսքը բացելու ու փակելու նպատակով:
- 2. Հանգույցին ներկայացվող հիմնական պահանջները** 2.1 Հանգույցը պետք է բաղկացած լինի պաշտպանիչ արկղից և միացնող տարրերից:
- 3. Հանգույցին ներկայացվող տեխնիկական պահանջները** 3.1 Հանգույցը պետք է պատրաստված լինի հետևյալ տեխնիկական պահանջներին ու ներկայացված գծագրերին համապատասխան:
Արտադրողի կողմից ներկայացված Տեղադրման հանգույցի արտադրության Տեխնիկական պայմանները պետք է հաստատված լինեն ՀՀ օրենքով սահմանված կարգով:

h/h	Պարամետրի անվանումը	Պարամետրը
3.1	Արկղ	
3.1.1	Արղի վերին նիստի (երեսակի) վրա անցքերի միջառանցքային հեռավորությունը, մմ	250
3.1.2	Արղի վերին նիստի (երեսակի) վրա անցքերի տրամագիծը, մմ	30
3.1.3	Արկղի եզրաչափերը, ոչ ավել, մմ - բարձրությունը - լայնությունը - խորությունը	370 380 190
3.1.4	Արկղի նյութը	համաձայն 4.2 կետի
3.1.5	Արկղի դռնակը	
	Չափերը, մմ	338 x 270
	Դիտապատուհանի չափերը, ոչ պակաս, մմ	130 x 90
	Դիտապատուհանի նյութը	4մմ հաստությամբ ապակի
	Կիպությունը	առանց ճեղքերի
3.1.6	Արկղի կոշտությունը	համաձայն 4.3 կետի
3.1.7	Պոլիէթիլենե վռանները	համաձայն 4.6 կետի
3.1.8	«ՀայՌուսգազարդ» ՓԲԸ լոգոտիպը	համաձայն 6.1 կետի
3.1.9	Արկղի գույնը	դեղին՝ համաձայն 4.17 կետի

3.1.10	Ամրացման անցքեր, 2 հատ, մմ	5.5
3.1.11	Դատարկման անցքեր, 2 հատ, մմ	10
3.1.12	Կապարակնքման անցքեր, մմ	2
3.1.13	Որակը	համաձայն 4 կետի
3.2	Միացման հանգույց	
3.2.1	Արույրե խցանային փական	3/4" ըստ ԳՕՍՍ 21345-79
3.2.2	11/4" վեցանիստ ագուցամանեկ	ըստ գծագրի
3.2.3	Պարուրակի որակը	ազատ պտտում, ըստ ԳՕՍՍ 6357-73
3.2.4	Պարոնիտե 11/4" միջադիր	2 հատ
3.2.5	Ջրագազամուղի 2.8մմ պատի հաստությամբ խողովակ, պայմանական տրամագիծը, մմ	20, ըստ ԳՕՍՍ 3265-75
3.2.6	Խողովակառստ հենակային 3/4"	ըստ գծագրի
3.2.7	Խողովակառստը	ըստ գծագրի
3.2.8	Պոլիէթիլեն վռանները	ըստ գծագրի
3.2.9	Գազի գտիչը	ըստ գծագրի

4. Հանգույցին ներկայացվող մեխանիկական պահանջները

- 4.1 Արկղի արտաքին տեսքը պետք է համապատասխանի բանվորական գծագրին և աղյուսակի կետ 3.1-ի պարամետրերին:
- 4.2 Արկղի նյութը՝ պողպատյա թիթեղ 1.5 մմ հաստությամբ:
- 4.3 Արկղի կառուցվածքը պետք է լինի կոշտ և թույլ չտա շեղումներ անկյունագծով:
- 4.4 Արկղի դռնակը պետք է կիպ հարի ակղի իրանին, ունենա բռնակ, ֆիքսավի իրանի հետ լեզվակի միջոցով և ունենա արկղի իրանի հետ կապարակնքման անցք: Արկղի դռնակի չափերը պետք է հնարավորություն տան հաշվիչը արկղում ազատ հավաքակցելու (տեղադրելու):
- 4.5 Արկղի ծխնիները պետք է լինեն չքանդվող և տեղադրված լինեն արկղի ներսում:
- 4.6 Խոնավության ներթափանցումը բացառելու նպատակով իրանի մուտքային ու ելքային խողովակառստերի միջև անհրաժեշտ կիպություն ապահովելու համար արկղի կափարիչի անցքերում արտադրողը ներմամլում է պոլիմերային նյութերից վռաններ:
- 4.7 Արկղի դռնակի վրա պետք է լինի ներսից հուսալիորեն ամրացված դիտապատուհան՝ 4 մմ-ից ոչ պակաս պաշտպանիչ ապակիով:
- 4.8 Արկղի դիտապատուհանի ամրացման ձևը պետք է հնարավորություն տա անրաժեշտության դեպքում

հեշտությամբ փոխարինել ապակին:

- 4.9 Արկղի հետի պատին պետք է լինեն ամրացման համար, իսկ հատակին՝ ջրահեռացման անցքեր:
- 4.10 Մուտքի խողովակառուտին տեղակայվում է խցանային փական Տպ 20՝ ըստ ԳՕՍՏ 21345-79:
- 4.11 Խողովակառուտերը պատրաստվում են ջրագազագամուղի Տպ 20 չափի 2.8մմ պատի հաստությամբ ըստ ԳՕՍՏ 3662-75 խողովակներից:
- 4.12 Միացման վայրերում չի թույլատրվում հատույթի տեղային նեղացումներ:
- 4.13 Մուտքային և ելքային խողովակառուտերի և հաշվիչների բկանցքների միացումը իրականացվում է ազուցամանեկների միջոցով, իսկ կիպությունը ապահովվում է 3մմ հաստությամբ պարոնիտե միջադիրներով:
- 4.14 Դետալների եռակցված միացումները պետք է կատարվեն այնպես, որ բացառվեն մակահոսուկները, հալքածակերը, թերաեռքը և այլ թերությունները:
- 4.15 Չի թույլատրվում ծլեպների առկայությունը: Մուր եզրերը պետք է բթացվեն 0.2...0.5 մմ շառավղով:
- 4.16 Մատուցվող գազի լրացուցիչ մաքրման համար հանգույցը պետք է ներառի դյուրահան գտիչ՝ ցանցը ըստ ԳՕՍՏ 6613, բջջի չափը ոչ ավել 0.5մմ-ից, մետաղալարի տրամագիծը՝ 0.22մմ:
- 4.17 Տեղադրման հանգույցը ամբողջովին՝ բացի խցանային փականից, ներկվում է դեղին գույնով, ըստ ԳՕՍՏ 9.301-86:

5. Լրակազմությունը

- 5.1 Մատակարարման լրակազմը պետք է ընդգրկի՝
 - հավաքված արկղ - 1 հատ
 - խցանային փական - 1 հատ
 - 1 1/4'' թուջե վեցանիստ ազուցամանեկ - 2 հատ
 - 3/4'' խողովակառուտ հենակային - 2 հատ
 - խողովակառուտ - 1 հատ
 - պոլիէթիլեն վռաններ - 2 հատ
 - գտիչ - 1 հատ
 - պարոնիտե միջադիրներ - 2 հատ:

6. Պիտակավորումը

- 6.1 Դռնակի վերին մասում ամրացվում է «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ լոգոտիպը:
- 6.2 Դռնակի ետևի մասում կատարվում է

- մակնիշավորում, որը պետք է ներառի՝
- պատրաստողի անվանումը,
- տեխնիկական պայմանների նշագիրը,
- պատրաստման տարեթիվը,
- գործարանային համարը:

6.3 Պիտակավորման եղանակը պետք է ապահովի մակնշման պահպանությունը շահագործման ողջ ժամկետի ընթացքում:

7. Փաթեթավորում

7.1 Տեղադրման հանգույցի փաթեթավորում չի կատարվում:

7.2 Տեղադրման հանգույցի միացման դետալները՝ բացի վռաններից, որոնք նախապես տեղադրվում են արդի վերին նիստի (երեսակի) անցքերում, տեղադրվում են պոլիէթիլենային փաթեթում և դրվում արկղի մեջ:


8. Երաշխիքը

8.1 Տեղադրման հանգույցի երաշխիքային ժամկետը 12 ամիս է՝ հաշված պատրաստող գործարանից առաքման օրվանից:


9. Մատակարարման ժամանակացույցը

Նախատեսված ծավալների մատակարարումը՝ թվով _____ հատ, իրականացվում է հավասարաչափ 201_թ. _____ - _____ ամիսների ընթացքում:


Բնական գազի կենցաղային հաշվիչի փեղարձանի հանգույց



Խողովակաւար
հենակային




Խողովակաւար
հենակային




Պոլիէթիլեն
վրան

Խողովակաւար



Ազուցամանկ



հլիւն

